ներից ինձ համար մի Ցովտակ ձեռք բերել։ Ինն տարի յետոյ Կ. Պոլիս Դպրոց գնալիս՝ անցանք միեւնոյն ճանապարհով. հին տպաւորութիւնս ամբողջապէս վերանորոգուեց. նորից լճակի ջրերը գնեցի, բայց բացի կոճերից ուրիշ կենդանի չտեսայ։

Այդը լճակից անցանք մի քանի հովիտ, ձոր ու տափարակ. հասանք Կոլայի Թէմիր-Կափու գիւղը։ Ճանապարհին մեր աջ կողմը կանգնած էր հսկայատես Ղըսըր-Ստերջ լեռը, որի լանջերի վրայ արածում էին բազմաթիւ ջոկեր, հօտեր եւ նախիրներ։ Ես գիտէի, որ ձին ու կովը կարող էին ստերջ մնալ. բայց լեռան ստերջ լինելը ինձ անբացատրելի մնաց։ Առաւօտ անցանք Կոլայի ճահիճները, ծաղկաւէտ մարմանդները. հանդստացանք Գերմուջէքի անտառում եւ ապա նոյն իրիկունը արեւով մտանք Շադեւան գիւղը։ Անմիջապէս եղբօրս հետ գնացինք Շադեւանի աւերակ տաճարն այցելելու, որի դմբէթն իջած էր. բայց սրբատաշ եւ քանդակաւոր որմերը, մանաւանդ ներքին պանդանտիւներից դուրս ցցած եղի, Առիւծի, Արծիւի եւ Մարդու կիսարձանները այնքան հրապուրեցին աչքերս, որ չէի ուզում հեռանալ աւերակից։ Կոլայի հիւսիսարեւմտեան մասում, Շադեւան, Մանիսք, Ախաշէն, Սիւնդիցդոմ (Ծինդիցդոմ), Ակահա, Դիկաշէն եւ Արդանեակ գիւղերում դեռ կանգուն կամարակապ այս եօթն տա-